Հաստատված է
Շուշիի տեխնոլոգիական համալսարանի
գիտական խորհրդի 2019թ. փետրվարի 7-ի
N1-02/19/4 որոշմամբ: Փոփոխությունները
կատարվել են 2019թ. մարտի 26-ի N2-03/19/1,
2020թ. սեպտեմբերի 15-ի N3-09/20/5,
2021թ. սեպտեմբերի 7-ի N3-09/20/5,
2022թ. օգոստոսի 26-ի N1-08/22/6,
2025 թ.-ի փետրվարի 26-ի N1-02/25/1
2025 թ.-ի օգոստոսի 29-ի N 1-08/29/7 որոշումներով

Գիտական խորհրդի նախագահ՝ Ն.Ա.Միքայելյան

ԿԱՐԳ
ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն փաստաթղթով սահմանվում է Շուշիի տեխնոլոգիական համալսարանում (այսուհետ՝ ՇՏՀ) իրականացվող ակադեմիական խմբերի կուրսղեկների ընտրության և գործունեության կարգը **(Փոփ. 07.09.2021թ. N3-09/20/5, 26.02.2025թ. N1-02/25/1)**:

1.2 ՈՒսանողների կարիքների վերհանման, լրացուցիչ և խորհրդատվական աշխատանքների կազմակերպման նպատակով ՇՏՀ-ում գործում է կուրսղեկների ինստիտուտը **(Փոփ.07.09.2021թ. N3-09/20/5, 26.02.2025թ. N1-02/25/1)**:

1.3 ՇՏՀ-ի ակադեմիական խմբերի կուրսղեկները նշանակվում են Համալսարանի ռեկտորի հրամանով՝ մանկավարժական խորհրդի օգոստոսյան առաջին նիստի ժամանակ՝ խորհրդի անդամների քվեարկությամբ: Միջին մասնագիտական կրթության կուրսղեկների աշխատանքները կանոնակարգվում է կազմակերպչադաստիարակչական աշխատանքների գծով Քոլեջի տնօրենի տեղակալի կողմից: (**Փոփ. 15.09.2020թ., N3- 09/20/5, 07.09.2021թ. N3-09/20/5, 26.08.2022թ. N1-08/22/6, 26.02.2025թ. N1-02/25/1 ,29.08.2025 թ., N 1-08/29/7**):

1.4 Կուրսղեկները նշանակվում են ուսանողների ուսումնական միջավայրին սահուն ինտեգրման, ակադեմիական խմբերում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի ձևավորման և պահպանման, ինչպես նաև կրթական և դաստիարակչական գործընթացներն արդյունավետ դարձնելու նպատակով:

1.5 Սույն կարգը հաստատվում և փոփոխությունների է ենթարկվում ՇՏՀ-ի գիտական խորհրդի որոշմամբ (Փոփ.26.02.2025թ. N1-02/**25/1**):

11. ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կուրսղեկն իր գործունեությունը պետք է իրականացնի կուրսղեկի տարեկան

աշխատանքային պլանի համաձայն:

2.2. Միջին մասնագիտության կրթության (Քոլեջի) կուրսղեկների աշխատանքի տարեկան վաճատրության հարցը որոշվում է նոր ուսումնական տարվա ՇՏՀ-ի առաջին գիտական խորհրդում: **(Փոփ26.08.2022թ. N1-08/22/6, 26.02.2025թ. N1-02/25/1):**

2.3 Կուրսղեկը պետք է հնարավորինս տեղեկացված լինի իր կուրսի ուսանողների ուսումնառության հետ առնչվող խնդիրներին, նրանց հետաքրքրություններին և կենցաղային պայմաններին:

2.4 Ուսանողների հետ աշխատանքի արդյունավետությունը բարձրացնելու համար, կուրսղեկն, ըստ անհրաժեշտության, կարող է անցկացնել ծնողական ժողովներ, որտեղ կարող են քննարկվել ինչպես պրոֆիլակտիկ, այնպես էլ կուրսում ուսանողներին վերաբերող առկա հիմնախնդիրներ:

2.5 Խմբում ուսանողների վերաբերյալ առկա խնդիրները, անհրաժեշտության դեպքում, կուրսղեկի առաջարկությամբ կարող են քննարկվել ՇՏՀ գիտական խորհրդում (Փոփ.26.02.2025թ. N1-02/25/1):

2.6 Օրինակելի (ուսման որակի, կարգապահական) խմբերի կուրսղեկները կարող են խրախուսվել ռեկտորի կողմից (Փոփ.26.02.2025թ. N1-02/**25/1**):

2.7 Կուրսղեկն իրավասու է խմբի ուսանողների համար կազմակերպել կոլեկտիվ, կուլտուր-մասսայական միջոցառումներ:

2.8 Կուրսղեկն իրավասու է մասնակցելու կուրսի ուսանողների շրջափոխմանը:

III. ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1. ՇՏՀ-ի ակադեմիական խմբերի կուրսղեկները իրենց աշխատանքներում առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով **(Փոփ.07.09.2021թ. N3-09/20/5, 26.02.2025թ. N1-02/25/1).**

1) Խորհրդատվության տրամադրումը, որպես առաջատար գործունեության սկզբունք,
2) մարդասիրության սկզբունք,
3) համալիր մոտեցման սկզբունք,
4) անհատական առանձնահատկությունների հաշվառման և համակարգվածության սկզբունք (խորհրդատվությունը որպես մանկավարժական ազդեցություն),
5) նպատակաուղղվածության սկզբունք,
6) օբյեկտիվության սկզբունք,
7) վճռականության սկզբունք,
8) աշխատանքների թափանցիկության սկզբունք:

IV. ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

4.1 Կուրսղեկի գործառույթներն ուսանողների հետ աշխատանքներում ներառում են հետևյալ հիմնական բնագավառները.

1) ուսանողների ուսումնական գործընթաց,
2) ուսանողների արտաուսումնական գործունեություն,
3) ուսանողների անհատական խնդիրներ,
4) խմբում միջանձնային հարաբերություններ:

4.2 Ուսանողների հետ տարվող աշխատանքներում կուրսղեկները իրականացնում են հետևյալ գործառույթները.

1) ուսանողին ուսումնակրթական նոր համակարգին հարմարվելու աջակցում,
2) իրավունքների և պարտականությունների ներկայացում,
3) ուսանողների և դասախոսների միջև բարիդրացիական հարաբերությունների ստեղծում,
4) ծանոթացում ՇՏՀ-ի ուսումնական գործընթացներին, ներբուհական օրենքներին ու կանոններին (ՇՏՀ-ի կանոնադրություն, ներքին կարգապահական կանոններ, մասնագիտական ուսումնական պլաններ և այլն) (Փոփ.26.02.2025թ. N1-02/**25/1**),
5) ծանոթացում ՇՏՀ-ի նոր կանոնակարգերին (հրամաններ, հրահանգներ) (Փոփ.26.02.2025թ. N1-02/**25/1**),
6) հաճախումների նկատմամբ վերահսկողության իրականացում,
7) առաջադիմության հետ կապված հարցերի քննարկում, ուսանողների ուսման մեջ հետ մնալու պատճառների և դրանց հաղթահարման ուղիների վերլուծում,
8) կոնֆլիկտային իրավիճակների և վիճելի հարցերի լուծման անմիջական մասնակցություն,
9) գիտահետազոտական, կուլտուր - մշակութային և սպորտային միջոցառումներին ու աշխատանքներին ուսանողների ներգրավվածության աջակցում,
10) ուսանողների առողջ ապրելակերպի ձևավորմանը նպաստող միջոցառումների կազմակերպում և կանխարգելիչ քայլերի ձեռնարկում՝ ոչ համարժեք վարքի դրսևորումներն ուսանողների շրջանում կանխելու համար,
11) պրոռեկտորին և դեկաններին ակադեմիական խմբերում տիրող իրավիճակի մասին տեղեկատվության պարբերաբար փոխանցում **(Փոփ. 07.09.2021թ. N3-09/20/5, 26.02.2025թ.N1-02/25/1),**
12) ուսման մեջ հետ մնացող ուսանողների ծնողներին ուսումնական կիսամյակի բացթողումների մասին գրավոր տեղեկացում:

V. ԿՈՒՐՍՂԵԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

5.1 ՇՏՀ-ի կուրսղեկների գործունեության արդյունավետությունը գնահատվում է, հաշվի առնելով ակադեմիական խմբերի և կուրսղեկի աշխատանաքային ձեռքբերումները հետևյալ

առումներով **(Փոփ.07.09.2021թ. N3-09/20/5, 26.02.2025թ.N1-02/25/1).**

1) ակադեմիական խմբերի մեջ խմբի ունեցած վարկանիշը (հաճախումներ, առաջադիմություն և այլն),
2) մասնակցությունը դաստիարակության հայեցակարգի իրականացման աշխատանքներին,
3) աջակցությունը խմբում ուսանողական ակտիվիստների ձևավորման գործընթացին (խմբի ավագ, ուս.խորհուրդ և այլն),
4) խմբի ուսանողների մասնակցությունը գիտական, մշակութա - հասարակական և սպորտային միջոցառումներին,
5) խմբի ուսանողների մասնակցությունը հասարակական հանրօգուտ աշխատանքներին և ներխմբային միջոցառումներին,
6) տեղեկատվական աշխատանքները ուսանողների և նրանց ծնողների հետ,
7) խորհրդատուի աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների ներդրումը և կիրառումը:

5.2 Կուրսղեկի աշխատանքը կարող է դադարեցվել հետևյալ դեպքերում.

1) կուրսղեկի հիմնական աշխատանքից ազատվելու,
2) կուրսղեկի ինքնակամ հրաժարականի,
3) խմբի ուսանողների մեծամասնության հիմնավորված պահանջով,
4) ՇՏՀ-ի ղեկավարության պահանջով՝ ոչ արդյունավետ աշխատանքի հիմնավորման դեպքում) (Փոփ.26.02.2025թ. N1-02/**25/1**):

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ն.Ա. Միքայելյան**

Գիտական քարտուղարի պաշտոնակատար՝ **Լ.Գ. Այդինյան**